ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ

Գործ թիվ ՎԴ/1049/05/15

« 12 » հունիսի 2015թ. ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանը (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան), (դատավոր Ա.Առաքելյան), քննելով ըստ հայցի Թեհմինե, Գոհարիկ և Դերենիկ Եռոքյանների, Սևակ և Արքուր Մկրտչյանների, Արմեն Համբարձումյանի, Վանիկ Հովհաննիսյանի, Արամ Հովսեփյանի, Արքուր Մկրտչյանի, Ալեքսան Մնացականյանի, Գագիկ Գրիգորյանի, Նաիրի Ներսիսյանի, «ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ» հասարակական կազմակերպության և «ԷԿՈԴԱՐ» բնապահպանական հասարակական կազմակերպության ընդդեմ ՀՀ բնապահպանության նախարարության, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության և ՀՀ գիտության ազգային ակադեմիայի Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի՝ 24.09.2014 թվականին տեղի ունեցած նիստում «ԳԵՈԹԻՄ» փակ բաժնետիրական ընկերության կողմից մշակված ՀՀ Վայոց Ձորի մարզի Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի նախագծին դրական եզրակացություն տալը ոչ իրավաչափ ճանաչելու, ՀՀ բնապահպանության նախարարության կողմից 17.10.2014 թվականին տրված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության» թիվ ԲՖ-76 փորձագիտական եզրակացությունն անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 11.11.2014 թվականի թիվ 188-Ա հրամանը, 12.11.2014 թվականին տրված 26.09.2012 թվականի վերաձևակերպված թիվ ՇԱԹՎ29/245 թույլտվությունը, 12.11.2014 թվականին կատարված 26.09.2012 թվականի լեռնահատկացման թիվ ԼՎ-245 ակտի փոփոխությունը, «Ընդերքի տեղամասի ընդլայնման և թույլտվության ժամկետի փոփոխության մասին» ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 24.11.2014 թվականի թիվ 286-Ա հրամանը, նշված հրամանի հիման վրա 25.11.2014 թվականին 26.09.2012 թվականի վերաձևակերպված լեռնահատկացման ԼՎ-245 ակտում կատարված փոփոխությունը, ինչպես նաև 29.11.2014 թվականին նույն նախարարի կողմից 26.09.2012 թվականին վերաձևակերպված թիվ ՇԱԹՎ-29/245 թույլտվությունում կատարված փոփոխությունը անվավեր ճանաչելու պահանջների մասին, թիվ ՎԴ/1049/05/15 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 09.04.2015 թվականի «Հայցադիմումի մի մասի ընդունումը մերժելու, իսկ մյուս մասը

վերադարձնելու վերաբերյալ» որոշման՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասի դեմ հայցվորների ներկայացուցիչ Հայկ Ալումյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Թեհմինե, Գոհարիկ և Դերենիկ Ենոքյանները, Սնակ և Արթուր Մկրտչյանները, Արմեն Համբարձումյանը, Վանիկ Հովհաննիսյանը, Արամ Հովսեփյանը, Արթուր Մկրտչյանը, Ալեքսան Մնացականյանը, Գագիկ Գրիգորյանը, Նաիրի Ներսիսյանը, «ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ» հասարակական կազմակերպությունը և «ԷԿՈԴԱՐ» բնապահպանական հասարակական կազմակերպությունը հայցադիմում են ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ բնապահպանության նախարարության, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության և ՀՀ գիտության ազգային ակադեմիայի Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի՝ 24.09.2014 թվականին տեղի ունեցած նիստում «ԳԵՈԹԻՄ» փակ բաժնետիրական ընկերության կողմից մշակված ՀՀ Վայոց Ձորի մարզի Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի նախագծին դրական եզրակացություն տալը ոչ իրավաչափ ճանաչելու, ՀՀ բնապահպանության նախարարության կողմից 17.10.2014 թվականին տրված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության» թիվ ԲՖ-76 փորձագիտական եզրակացությունն անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 11.11.2014 թվականի թիվ 188-Ա հրամանը, 12.11.2014 թվականին տրված 26.09.2012 թվականի վերաձևակերպված թիվ ՇԱԹՎ29/245 թույլտվությունը, 12.11.2014 թվականին կատարված 26.09.2012 թվականի լեռնահատկացման թիվ ԼՎ-245 ակտի փոփոխությունը, «Ընդերքի տեղամասի ընդլայնման և թույլտվության ժամկետի փոփոխության մասին» ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 24.11.2014 թվականի թիվ 286-Ա հրամանը, նշված հրամանի հիման վրա 25.11.2014 թվականին 26.09.2012 թվականի վերաձևակերպված լեռնահատկացման ԼՎ-245 ակտում կատարված փոփոխությունը, ինչպես նաև 29.11.2014 թվականին նույն նախարարի կողմից 26.09.2012 թվականին վերաձևակերպված թիվ ՇԱԹՎ-29/245 թույլտվությունում կատարված փոփոխությունը անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (դատավոր՝ Կ.Զարիկյան) 2015թ. ապրիլի 9-ի որոշմամբ հայցադիմումի մի մասի ընդունումը մերժվել է, իսկ մյուս մասը վերադարձվել:

Չհամաձայնվելով վերը նշված որոշման՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասի հետ հայցվորների ներկայացուցիչ Հայկ Ալումյանը 2015 թվականի ապրիլի 27-ի փոստային առաքմամբ ներկայացրել է վերաքննիչ բողոք:

Թիվ ՎԴ/1049/05/15 վարչական գործի հավելվածը Վերաքննիչ դատարան է ստացվել 14.05.2015թ. և նույն օրը հանձնվել է դատավոր՝ Ա.Առաքելյանին:

Վերաքննիչ դատարանի 2015թ. մայիսի 18-ի որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ:

Վերաքննիչ դատարանին վերաքննիչ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Գործի հանգամանքները.

Հայցվորները 02.04.2015 թվականին հայցադիմում են ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության և գիտությունների ազգային ակադեմիայի «Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողով»-ի խնդրելով՝

«1. ՀՀ ԳԱԱ «Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի» կողմից՝ 24.09.2014 թվականին տեղի ունեցած նիստում «Գեոթիմ» ՓԲԸ կողմից մշակված՝ «ՀՀ Վայոց Ձորի մարզի Ամուլսարի Ոսկեբեր քվարցիտների հանքավայրի նախագծին դրական եզրակացություն տալը ճանաչել ոչ իրավաչափ:

Ճանաչել անվավեր ՀՀ բնապահպանության նախարարության կողմից 17.10.2014 թվականին տրված՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության» թիվ ԲՖ-76 փորձագիտական եզրակացությունը:

Որպես հետևանք՝ ճանաչել անվավեր ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի թվականի թիվ 188-Ա հրամանը, վերջինիս կողմից 12.11.2014 թվականին տրված՝ 26.09.2012 թվականի վերածնակերպված թիվ ՇԱԹՎ-29/245 թույլտվությունը, 12.11.2014 թվականին կատարված՝ 26.09.2012 թվականի լեռնահատկացման թիվ ԼՎ-245 ակտի փոփոխությունը, «Ընդերքի տեղամասի ընդլայնման և թույլտվության ժամկետի փոփոխության մասին» ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 24.11.2014 թվականի թիվ 286-Ա հրամանը, նշված հրամանի հիման վրա թվականին 26.09.2012 թվականի վերածնակերպված լեռնահատկացման ԼՎ-245 ակտում կատարված փոփոխությունը, ինչպես նաև՝ 29.11.2014 թվականին նույն նախարարի կողմից 26.09.2012 թվականի վերածնակերպված թիվ ՇԱԹՎ-29/245 թույլտվությունում կատարված փոփոխությունը:»:

ՀՀ վարչական դատարանի դատավոր Կարեն Զարիկյանի 09.04.2015 թվականի որոշմամբ ՀՀ ԳԱԱ «Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի» կողմից՝ 24.09.2014 թվականին տեղի ունեցած նիստում «Գեոթիմ» ՓԲԸ կողմից մշակված՝ «ՀՀ Վայոց Ձորի մարզի Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի նախագծին դրական եզրակացություն տալը ոչ իրավաչափ ճանաչելու և ՀՀ բնապահպանության նախարարության կողմից 17.10.2014 թվականին տրված՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության» թիվ ԲՖ-76 փորձագիտական եզրակացությունն անվավեր ճանաչելու պահանջների մասով հայցադիմումի ընդունումը մերժվել է:

ՀՀ վարչական դատարանի որոշման պատճառաբանությունները.

Դատարանի պատճառաբանությունները հանգում են նրա, որ ՀՀ ԳԱԱ «Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի» կարծիքը և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության» թիվ ԲՖ-76 փորձագիտական եզրակացությունը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի իմաստով հանդիսանում են փորձագետի եզրակացություն, որն էլ իր հերթին՝ նույն օրենքի 42-րդ հոդվածի հիման վրա, համարվում է վարչական վարույթի ապացույց:

Հիմնվելով այս դրույթի վրա, Վարչական դատարանը եզրակացրել է, որ այդ մասով հայցը ենթակա չէ դատարանում քննության և, կիրառելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, այդ պահանջների մասով հայցադիմումի ընդունումը մերժել է:

Վերաքննիչ բողոքի հիմքերն ու հիմնավորումները.

Վարչական դատարանի որոշումը հակասում է համանման իրավիճակում ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշման:

Թիվ ՎԴ/3275/05/09 գործով ըստ հայցի «ԷԿՈԴԱՐ» բնապահպանական հասարակական կազմակերպության ընդդեմ Հայաստանի Հանրապետության կառավարության, բնապահպանության նախարարության և էներգետիկայի և բնական պաշարների նախարարության հայցվորը, ի թիվս այլի, վիճարկում էր ՀՀ բնապահպանության նախարարի կողմից 03.04.2006 թվականին հաստատված՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական թիվ ԲՓ-31 դրական եզրակացությունը և 07.11.2006 թվականին հաստատված՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական թիվ ԲՓ-135 դրական եզրակացությունը, պահանջելով ճանաչել դրանց առ ոչինչ լինելը:

ՀՀ վարչական դատարանի կողմից հայցադիմումի ընդունումը մերժվել էր, այդ որոշումը բողոքարկվել էր մինչև ՀՀ վճռաբեկ դատարան:

ՀՀ վճռաբեկ դատարանի 30.10.2009 թվականի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը վերացվել էր: Թեև հայցադիմումի ընդունումը մերժված էր մեկ այլ հիմքով, սակայն ակնհայտ է, որ եթե Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությունը վարչական ակտ չհանդիսանար և դատական կարգով ենթակա չլիներ վիճարկման, ապա այդ մասով ՀՀ վճռաբեկ դատարանը չէր վերացնի հայցադիմումի ընդունումը մերժելու մասին ՀՀ վարչական դատարանի որոշումը:

Օրենքի 1-ին հոդվածում ասված է՝

«Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների (...), շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության (...) ոլորտի հասարակական հարաբերությունները»:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասում ասված է՝ «Փորձաքննության նպատակն է հայտի կամ գնահատման հավաստիության ստուգումը, հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության թույլատրելիության որոշումը»:

Օրենքի 32-րդ հոդվածում ասված է՝

«Սույն օրենքով սահմանված պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են լիազոր մարմինը և հասարակությունը՝ օրենքով սահմանված կարգով»:

Ինչպես երևում է վերը մեջբերված նորմերից, փորձաքննությունն իրականացվում է պետության կողմից («պետական փորձաքննություն» եզրույթը), դրա արդյունքում որոշում է կայացվում՝ «նախատեսվող գործունեության թույլատրելիության» մասին:

Միաժամանակ, օրենքով սահմանված պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնող երկու սուբյեկտներից մեկը հասարակությունն է: Այն իրականացնում է վերահսկողությունը «օրենքով սահմանված կարգով»: Այդ վերահսկողությունը իր մեջ պետք է ներառի ոչ միայն հանրային քննարկումներին մասնակցելը, այլ նաև՝ փորձաքննության արդյունքների վիճարկման հնարավորությունը: Իսկ օրենքով սահմանված վիճարկման կարգը (եթե խոսքը գնում է արդյունավետ վիճարկման մասին) կարող է լինել միայն դատական կարգը:

«Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիայով (Օրհուսի կոնվենցիա), որի դրույթների ապահովման մասին է ընդունվել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը, նախատեսված է ոչ միայն շահագրգիռ հասարակության մասնակցությունը քննարկման փուլում, այլ նաև՝ այդ հասարակության ներկայացուցիչների համար դատարանի մատչելիությունը:

Այսպիսով, բնապահպանական փորձաքննություն կատարելիս Օրենքով սահմանված կարգերի պահպանման և ընդունված որոշումների նկատմամբ հասարակության վերահսկողությունը, որը նախատեսված է 32-րդ հոդվածով, կարող է իրականացվել միայն դատարանի միջոցով:

Վարչական դատարանի որոշումը հակասում է Օրհուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածին: Այսպես.

Օրհուսի կոնվենցիայի իմաստով ՀՀ ԳԱԱ «Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի» կողմից՝ 24.09.2014 թվականին տեղի ունեցած նիստում «Գեոթիմ» ՓԲԸ կողմից մշակված՝ «ՀՀ Վայոց Ձորի մարզի Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի նախագծին դրական եզրակացություն տալու մասին որոշումը նույնպես հանդիսանում է «որոշումների ընդունման գործընթաց»-ի բաղկացուցիչ մաս:

Կոնվենցիայի 9-րդ հոդվածի համաձայն՝

«2. Յուրաքանչյուր Կողմ իր ազգային օրենսդրության շրջանակներում ապահովում է, որ հասարակության համապատասխան ներկայացուցիչները, որոնք՝

ա) ունեն բավականին շահագրգռվածություն կամ որպես այլընտրանքային տարբերակ,

բ) համարում են, որ տեղի է ունեցել այս կամ այն իրավունքի խախտում, եթե դա պահանջվում է համապատասխան Կողմի վարչական ընթացակարգային նորմերով, մուտք ունենան դեպի դիտարկման ընթացակարգը դատարանում և/կամ օրենքի համաձայն հիմնված մեկ այլ անկախ և անաչառ մարմնում ընդունված ցանկացած որոշման, գործողության կամ անգործության օրինականությունը իրավական և ընթացակարգային տեսակետից վիճարկելու նպատակով, հոդված 6-ի դրույթների և սույն Կոնվենցիայի այլ համապատասխան դրույթների պահպանման պայմանով և այնտեղ, որտեղ դա նախատեսված է ազգային օրենքներին համապատասխան և առանց վտանգելու ստորև բերված կետ 3-ը: Բավարար շահագրգռության առկայությունը և այս կամ այն իրավունքի խախտումը որոշվում է ելնելով ազգային օրենսդրության դրույթներից և շահագրգիռ հասարակությանը դեպի արդարադատություն, սույն Կոնվենցիայի շրջանակներում, լայն մուտք տրամադրելու նպատակից: Այս նպատակով վերը բերված ենթակետ ա)-ի նպատակների համար բավարար է ցանկացած հասարակական

կազմակերպության, որը համապատասխանում է հոդված 2-ի կետ 5-ում նշված պահանջներին, շահագրգռվածությունը: Այդպիսի կազմակերպությունը կարող է նմանապես իրավունք ունենալ հայտարարել իր իրավունքների խախտման մասին՝ ըստ վերոհիշյալ բ) կետի:

Սույն կետ 2-ի դրույթները չեն բացառում վարչական մարմնում նախնական դիտարկման ընթացակարգի հնարավորությունը և չեն առնչվում վարչական ընթացակարգերի սպառման հետ, նախքան դատական ընթացակարգերին անցնելը, այն դեպքերում, երբ այդպիսի պահանջը նախատեսված է ազգային օրենսդրությամբ:

3. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է վերը բերված կետ 1-ում և 2-ում հիշատակված դիտարկման ընթացակարգերից բացի և առանց դրանք խախտելու, որ հասարակության այն ներկայացուցիչները, որոնք համապատասխանում են ազգային օրենսդրության մեջ բերված չափանիշներին, եթե այդպիսիք գոյություն ունենան, մուտք դեպի վարչական կամ դատական ընթացակարգերը վիճարկելու մասնավոր անձանց կամ պետական մարմինների այն գործողությունները կամ անգործությունը, որոնք խախտում են շրջակա միջավայրին առնչվող ազգային օրենսդրության դրույթները:»:

Ելնելով վերը շարադրվածից, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 4-րդ մասով, խնդրում է թիվ ՎԴ/1049/05/15 գործով ՀՀ վարչական դատարանի 09.04.2015 թվականի որոշումը՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասով՝ վերացնել:

3.Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով բողոքը՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ այն ենթակա է մերժման, հետևյալ հիմնավորմամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար:

Սույն բողոքով բողոքաբեր կողմը խնդրում է վերացնել ՀՀ վարչական դատարանի 09.04.2015թ. որոշումը՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասով:

ՀՀ վարչական դատարանի կողմից հայցադիմումի ընդունումը մերժվել է հետևյալ պահանջների մասով՝

- ոչ իրավաչափ ճանաչել ՀՀ ԳԱԱ «Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի» կողմից 24.09.2014թ. տեղի ունեցած նիստում «Գեոթիմ» ՓԲ ընկերության կողմից մշակված՝ «ՀՀ Վայոց Ձորի մարզի Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի նախագծին դրական եզրակացություն տալը.

- անվավեր ճանաչել ՀՀ բնապահպանության նախարարության կողմից 17.10.2014թ. տրված՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության» թիվ ԲՖ-76 փորձագիտական եզրակացությունը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (այսուհետ՝ Սահմանադրություն), միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը (ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները):

Օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ոչ իրավաչափ ճանաչել այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողությունը կամ անգործությունը, եթե հայցվորն արդարացիորեն շահագրգռված է ակտը կամ գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու մեջ, այսինքն՝

1) առկա է նմանատիպ իրավիճակում նմանատիպ միջամտող վարչական ակտ կրկին ընդունելու կամ գործողություն կրկին կատարելու վտանգ.

2) հայցվորը մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում, կամ

3) դա նպատակ է հետապնդում վերականգնելու հայցվորի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Ուստի վերը նշված պահանջների ընդունելության հարցը լուծելու համար անհրաժեշտ է պարզել, թե վիճարկվող փորձագիտական եզրակացությունն հանդիսանում է վարչական ակտ, թե՝ ոչ, ինչպես նաև՝ թե հանձնաժողովի կողմից եզրակացություն տալը որպես գործողություն ներկայացնում է իրենից ռեալ ակտ, այսինքն առաջացնում է որևէ հետևանք հայցվոր կողմի համար, թե՝ ոչ, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

Այս առումով, Վերաքննիչ դատարանը մատնանշում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի հիմքով կարող են վիճարկվել միայն այն վարչական կամ ռեալ ակտերը, որոնք իրենցից ներկայացնում են վարչարարության արդյունքում կայացված ակտեր կամ կատարված գործողություններ, այլ ոչ թե՝ վարույթի ընթացիկ փուլում ստացված ապացույցներ, կայացված որոշումներ կամ կատարված գործողություններ, որոնք ինքնին անձի համար չեն սահմանում իրավունքներ կամ պարտականություններ, ենթակա չեն ինքնուրույն վիճարկման և դրանց իրավաչափության հարցը կարող է քննարկման առարկա դառնալ միայն վերջնական ակտի իրավաչափության ստուգման շրջանակներում:

Հետևաբար, իրավաչափ է ՀՀ վարչական դատարանի եզրահանգումն առ այն, որ վիճարկվող ակտերով անձանց իրավունքների որևէ միջամտություն տեղի չի ունեցել, քանի որ դրանցով չի որոշվել ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման հարցը, իսկ դրանք ենթակա են քննարկման վարչական վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտերի իրավաչափության ստուգման շրջանակներում: Այդ շրջանակներում էլ կարող է ապահովվել փորձաքննության նկատմամբ հասարակական վերահսկողությունը:

Ուստի անհիմն է բողոքաբերի պնդումը, որ Վարչական դատարանի որոշումը հակասում է «Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքին և Օրհուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածին:

Ինչ վերաբերում է բողոքաբերի վկայակոչած ՎԴ/3275/05/09 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.10.2009թ. որոշմանը, ապա, ինչպես իրավացիորեն նշել է բողոքաբերը, տվյալ որոշմամբ քննարկման առարկա չի դարձել և եզրահանգումներ չեն կատարվել փորձաքննության՝ վարչական ակտ հանդիսանալու կամ չհանդիսանալու վերաբերյալ, իսկ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով դատարանի համար պարտադիր են միայն որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները):

Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 140-րդ, 141-րդ, 144-146-րդ, 148-րդ, 153-րդ և 156-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը,

ՈՐՈՇԵՑ

Վերաքննիչ բողոքը մերժել՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 09.04.2015 թվականի թիվ ՎԴ/1049/05/15 վարչական գործով կայացված որոշումը թողնելով անփոփոխ:

Որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան՝ այն ստանալու պահից հնգօրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ